

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ՉԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԳԼԱՅԱՏՄԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ամփոփագիր



© Միավորված ազգերի կազմակերպության մանկական
հիմնադրամ (ՅՈՒՆԻՍԵՖ), 2022թ.

Նյութը վերահրատարակելու, կրկնօրինակելու, տպագրելու կամ
թարգմանելու ցանկության դեպքում անհրաժեշտ է ձեռք բերել
ՅՈՒՆԻՍԵՖ-ի գրավոր թույլտվությունը՝ հարցում ուղարկելով
հետևյալ հասցեներին. ՅՈՒՆԻՍԵՖ, Պետրոս Ադամյան փող. 14,
Երևան, 0010, Էլ. հասցե՝ yerevan@unicef.org

ՅՈՒՆԻՍԵՖ-ի լուսանկարները պաշտպանված են հեղինակային
իրավունքով և չպետք է վերատպվեն որևէ հարթակում՝ առանց
ՅՈՒՆԻՍԵՖ-ից նախնական գրավոր թույլտվություն ստանալու:
ՅՈՒՆԻՍԵՖ-ի լուսանկարները տարածելու/վերատպելու
վերաբերյալ հարցումները պետք է ուղղվեն ՅՈՒՆԻՍԵՖ-ի
հայաստանյան գրասենյակին՝ Պետրոս Ադամյան փող. 14,
Երևան, 0010 կամ yerevan@unicef.org Էլ.հասցեին:

Կազմի լուսանկարը՝ © UNICEF Armenia/2021/Մարգարյան



**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ՉԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**
Ամփոփագիր

«Հայաստանում ուսուցման զանգվածային գնահատման ազգային համակարգի վերլուծություն» ուսումնասիրությունը պատվիրել է ՅՈՒՆԻՍԵՖ-ը Կրթության համաշխարհային գործընկերության (ԿՀԳ) հիմնադրամի՝ Հայաստանի Հանրապետությանը տրամադրած «Կրթության ոլորտի զարգացման ծրագիր» դրամաշնորհի շրջանակում: Ուսումնասիրությունը մշակվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (ԿԳՄՍՆ) հետ քննարկման արդյունքում: Ուսումնասիրությունն իրականացրել է փորձագիտական խումբը, գնահատել են անկախ գրախոսներ, և վերանայել են ՅՈՒՆԻՍԵՖ-ի և Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ)՝ համապատասխանաբար դրամաշնորհային գործակալի և համակարգող գործակալության աշխատակիցները/խորհրդատուները՝ ընտրված տեղական կրթական խմբի կողմից (ՏԿԽ), որը ստեղծել է ԿԳՄՍՆ-ն ԿՀԳ հիմնադրամի հետ համագործակցության շրջանակում:

Երախտագիտություն

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը (ՅՈՒՆԻՍԵՖ) բարձր է գնահատում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (ԿԳՄՄՆ) անգնահատելի աջակցությունն այս զեկույցի պատրաստման գործում:

Սույն զեկույցը պատրաստվել է հիմնական թիմի կողմից, որը բաղկացած է հետևյալ խորհրդատուներից (տես Հավելված 2)՝ Հայկ Դավեյան (Թիմի ղեկավար), Էլլա Կարագուլյան (ավագ փորձագետ), Շուշաննա Մանջիկյան (կրտսեր փորձագետ) և Անի Ասրյան (կրտսեր փորձագետ): Աշխատանքներն իրականացվել են Ալվարո Պոդոյանի (Կրթության մասնագետ, ՅՈՒՆԻՍԵՖ) և Արման Գասպարյանի (Կրթության համակարգող, ՅՈՒՆԻՍԵՖ) ընդհանուր ղեկավարությամբ: Ռամյա Վիվեկանանդանը (Կրթության ավագ մասնագետ, ԿՀԳ հիմնադրամ) և Սեջի Պիեռ-Լուիսը (Ուսուցման գնահատման խորհրդատու, ԿՀԳ հիմնադրամ) իրականացրել են զեկույցի վերանայումը և կազմակերպել կողմնորոշիչ նիստ՝ թիմին ուղղորդելու Ուսուցման զանգվածային գնահատման ազգային համակարգերի վերլուծության (Analysis of National

Learning Assessment Systems (ANLAS)) կիրառման նպատակով, որը նախաձեռնվել էր ԿՀԳ գործընկեր երկրների կրթության ոլորտի պլանավորմանն աջակցելու նպատակով և փորձարկվել էր Երեք ԿՀԳ գործընկեր երկրներում: Պիլոտային երեք երկրներից յուրաքանչյուրը նշանակալի ներդրում է ունեցել ANLAS-ի զարգացման գործընթացում՝ թույլ տալով թեստավորել ինչպես ANLAS գործիքակազմի բովանդակությունը, այնպես էլ այս ռեսուրսների օգտագործման գործընթացը՝ վերլուծելու ուսուցման ազգային գնահատման համակարգը և կատարելու կրթության ոլորտային ծրագրերի շրջանակներում ռազմավարությունների կատարելագործմանն ուղղված առաջարկություններ:

Թիմն անչափ երախտապարտ է Ադրիեն Բաբլոյանին (Հետազոտության և գնահատման համակարգող, ՅՈՒՆԻՍԵՖ) և Աստղիկ Մարտիրոսյանին (Երեխաների իրավունքների մոնիտորինգի և գնահատման մասնագետ, ՅՈՒՆԻՍԵՖ) մասնագիտական գրախոսության համար, Չոյա Անդեկյանին (ծրագրի օգնական, ՅՈՒՆԻՍԵՖ) վարչական հարցերում աջակցության համար,

ինչպես նաև Զրիստիան Գարբիս Ադանայանին և Ազնիվ Նասյանին՝ համապատասխանաբար, վերջնական գեկույցի անգլերեն և հայերեն տարբերակները սրբագրելու համար: Շնորհակալություն ենք հայտնում նաև Նարեկ Մանուկյանին (Ծրագրի խորհրդական, ԱԶԲ)՝ կրթության ոլորտի վերլուծության տարբեր փուլերում ուղղորդման և առաջարկությունների համար: Թիմը նաև իր երախտագիտությունն է հայտնում միջազգային խորհրդատու դոկտոր Դեյվիդ Ռուտկովսկիին՝ կրթության գնահատման ծրագրերի ոլորտում իր փորձով ուսումնասիրությանը նպաստելու համար:

Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում ANLAS-ի բոլոր մասնակիցներին՝ կազմված ուսուցիչներից, կրթության ավագ փորձագետներից, ուսուցիչների վերապատրաստում իրականացնողներից, զարգացման գործընկերներից և Գնահատման և թեստավորման կենտրոնի անձնակազմից՝ անգնահատելի տեղեկատվության և մոտեցումներ տրամադրելու համար:

Հայցում ենք ներողամտություն ցանկացած բացթողման համար և մեր անկեղծ շնորհակալությունն ենք հայտնում բոլորին, ովքեր սիրով նվիրեցին իրենց ժամանակը և փորձը:

Ամփոփագիր

Հետազոտության նպատակը և մեթոդաբանությունը

Այս հետազոտությունն անցկացվել է Հայաստանում ուսուցման զանգվածային գնահատման ազգային համակարգի վերլուծության (ANLAS) նպատակով: Իրականացվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի պատվերով «Կրթության համաշխարհային գործընկերության հիմնադրամի» (ԿՀԳ)՝ Հայաստանի Հանրապետությանը տրամադրած «Կրթության ոլորտի զարգացման ծրագիր» դրամաշնորհի (ESPDG) շրջանակում: ANLAS-ը մշակվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (ԿԳՄ) նախարարության հետ քննարկման արդյունքում:

Հետազոտության ընթացքում գնահատվել են Հայաստանում ուսուցման զանգվածային գնահատման ազգային ծրագրերի ներկա վիճակը և այդ ծրագրերի իրականացման ընթացքում քաղված դասերը: Հայաստանում անցկացված հետազոտության **առաջնային նպատակն** է նպաստել երկրի ուսուցման գնահատման ազգային համակարգի բարելավմանը համապարփակ վերլուծության և քաղաքականության ոլորտում առաջարկությունների մշակման միջոցով, որոնք կունենան համակարգային բնույթ և կնպաստեն բոլոր սովորողների

արդար և անաչառ գնահատմանը: Հայաստանի ուսուցման գնահատման ազգային համակարգի բարելավմանը նպաստելու նպատակով տվյալ հետազոտության ընթացքում կիրառվել է որակական վերլուծության մեթոդը՝ կենտրոնանալով ANLAS-ի՝ որակի գնահատման համակարգերի երեք ուղղությունների վրա հիմնված հարցերի վրա:

Այս հետազոտության նպատակներն իրագործելու և առաջադրված հարցերին պատասխանելու համար օգտագործվել է ANLAS ձեռնարկը: ANLAS մոտեցումը ներառում է հետևյալ երեք առանցքային ուղղությունները (Նկար 1).

1. **Գնահատման համակարգի համատեքստը (CN):**
2. **Գնահատման համակարգի որակը (QLE):**
3. **Գնահատման համակարգի համահնչունությունը (CH):**

Ուղղություններից յուրաքանչյուրը գնահատվել է ըստ դրանց առանցքային ոլորտների և որակի համապատասխան չափանիշների, որոնք քննարկված են ստորև:

Առաջին ուղղությունը վերաբերում է ավելի լայն համատեքստին, որում գտնվում է ուսուցման

գնահատման ազգային համակարգը, և այն հարցին, թե որքանով է այդ համատեքստն օժանդակում գնահատման համակարգին: Առանցքային ոլորտները ներառում են՝ (i) օրենսդրություն կամ քաղաքականություն, (ii) ինստիտուցիոնալ մեխանիզմներ և կառավարում, (iii) ֆինանսավորում և (iv) առաջնորդություն¹:

Երկրորդ ուղղությունը

անդրադառնում է ուսուցման գնահատման որակի առանցքային գաղափարներին՝ նպատակի հստակություն և հետևողականություն, նպատակի համապատասխանություն, տեխնիկական ճշգրտություն, օբյեկտիվություն և անկախություն, թափանցիկություն, հաշվետվողականություն, Էթիկայի կանոնների պահպանում, արդարություն: Կրթության ոլորտի քաղաքականության և պրակտիկայի համար նշանակալի տվյալներ ապահովելու համար զանգվածային գնահատումների և քննությունների ժամանակ պետք է կիրառել հիմնավորված մեթոդներ:

Որպես այդպիսիք՝ ANLAS-ի համար սահմանված որակի չափանիշները կենտրոնանում են յուրաքանչյուր առանցքային ոլորտի այն ասպեկտների վրա, որոնք առավել էական են տեխնիկական ճշգրտությունն ապահովելու համար²:

Երրորդ չափումն ուսումնասիրում է, թե որքանով է գնահատման համակարգը համապատասխանում ավելի լայն կրթական համակարգի կարևոր ասպեկտներին: Առանցքային ոլորտներն են (i) կրթական չափորոշիչները և ծրագիրը, (ii) կրթական համակարգի կառուցվածքը, (iii) կրթության առաջնահերթությունները, համակարգային մակարդակում տվյալների կիրառումը³:

Ստորև ներկայացված է ANLAS ձեռնարկում սահմանված յուրաքանչյուր առանցքային ոլորտին համապատասխանող գնահատման հարցերի ցանկը:

1. Որքանով է ուսուցման գնահատման ազգային համակարգի համատեքստը

¹Վիվեկանանդան Ռ., Պիեր-Լուի Մ., Ուսուցման գնահատման ազգային համակարգերի վերլուծության (ANLAS) ձեռնարկ, Ավստրալիայի կրթության հետազոտությունների խորհուրդ (ACER), 2019 թ., էջ 5:

²Վիվեկանանդան Ռ., Պիեր-Լուի Մ., Ուսումնառության գնահատման ազգային համակարգերի վերլուծության (ANLAS) ձեռնարկ, Ավստրալիայի կրթության հետազոտությունների խորհուրդ (ACER), 2019 թ., էջեր 5-9:

³Վիվեկանանդան Ռ., Պիեր-Լուի Մ., Ուսումնառության գնահատման ազգային համակարգերի վերլուծության (ANLAS) ձեռնարկ, Ավստրալիայի կրթության հետազոտությունների խորհուրդ (ACER), 2019 թ., էջեր 10-12:

օժանդակում զանգվածային գնահատման ծրագրերին:

ա. Ինչպե՞ս է գնահատման համակարգն ուղղորդվում օրենսդրությամբ կամ քաղաքականությամբ:

բ. Ուսուցման գնահատումների համար ինչպիսի՞ փնտիտուցիոնալ շրջանակներ և կառավարման կառույցներ են գործում:

գ. Արդյո՞ք Կառավարությունը բավարար և կայուն ֆինանսավորում է ապահովում գնահատման համակարգի համար:

դ. Արդյո՞ք Կառավարությունն առաջնորդող դեր է ստանձնում և քաղաքական կամք դրսևորում գնահատման համակարգի աջակցման հարցում:

2. Որքանո՞վ է Հայաստանում իրականացված զանգվածային գնահատման ծրագրերի որակը համապատասխանում ուսուցման գնահատման որակի առանցքային գաղափարներին:

ա. Արդյո՞ք գործում են դաշտային աշխատանքների ստանդարտացումը, մշտադիտարկումը և փաստագրումն ապահովող որակի ապահովման

մեխանիզմները, որպեսզի տվյալները հավաքվեն նույն պայմաններում անկախ իրականացման համատեքստից:

բ. Ինչպե՞ս է ԳԹԿ-ն ապահովում, որ վերջնական տվյալների բազան զերծ լինի հակասություններից և սխալներից, պատշաճ կազմված ու փաստագրված լինի:

գ. Գործո՞ւմ են արդյոք որակի ապահովման մեխանիզմներ, որպեսզի ապահովվեն գնահատման գործիքների հուսալիությունը, վալիդությունն ու արդարությունը:

դ. Արդյո՞ք իրականացնող գործակալությունը գիտական ընտրանքի մեթոդներ է կիրառում, որոնք ապահովում են վիճակագրական ճշգրտության և վալիդության բավարար և չափելի մակարդակներ գնահատման արդյունքների մեկնաբանման համար:

ե. Արդյո՞ք առկա են տվյալների վերլուծության տեխնիկապես հիմնավոր և համապատասխան մեթոդներ, որոնք ճիշտ և օգտակար եզրակացությունների հնարավորություն ընձեռող վերլուծական արդյունքներ են ապահովում:

գ. Արդյո՞ք պատասխանատու հաստատությունները շահագրգիռ կողմերի տարբեր խմբերին համապատասխանեցված հաշվետվությունների և նյութերի տարածման համապատասխան գործիքներ են մշակում և կիրառում, արդյո՞ք խրախուսում են այդ խմբերի կողմից գնահատման տվյալների և արդյունքների նպատակահարմար և արդյունավետ կիրառումը:

3. Որքանո՞վ է գնահատման համակարգը համապատասխանում ավելի լայն կրթական համակարգի կարևոր ասպեկտներին:

ա. Արդյո՞ք գնահատման համակարգը համապատասխան տվյալներ է տրամադրում սովորողի գիտելիքների և հմտությունների մասին ու կենտրոնանում կրթական պաշտոնական չափորոշիչներին և ծրագրին համապատասխանեցված գիտելիքների կիրառման ու հմտությունների դրսևորման վրա:

բ. Արդյո՞ք գնահատման համակարգը համապատասխան տվյալներ է տրամադրում սովորողի ուսումնառության վիճակի և առաջընթացի վերաբերյալ տարրական և միջնակարգ կրթության առանցքային փուլերում, ինչպես նաև կրթական համակարգի համապատասխան մակարդակներում:

գ. Արդյո՞ք գնահատման համակարգը վստահելի փաստեր է տրամադրում սովորողների ուսումնառության և այն համատեքստերի վերաբերյալ, որտեղ իրականացվում է ուսուցումը՝ կրթական ոլորտի քաղաքականության և պրակտիկայի գերակայությունները նախանշելու նպատակով:

Հայաստանում ANLAS-ի գաղափարը ձևավորվել է որպես երկրի կողմից ուղղորդվող մասնակցային գործընթաց, որն իրականացնում է ազգային թիմը: Գործընթացի առաջնորդությունը ստանձնել է թիմի ղեկավարը, ուղղորդումը՝ Ղեկավար կոմիտեն⁴, ընդունվել է

⁴Վիվեկանանդան Ռ., Պիեր-Լուի Մ., Ուսումնառության գնահատման ազգային համակարգերի վերլուծության (ANLAS) ձեռնարկ, Ավստրալիայի կրթության հետազոտությունների խորհուրդ (ACER), էջ 2:

իրականացման համապարփակ երկփուլ մոտեցում: ANLAS-ի որակական ուսումնասիրության երկու հիմնական մեթոդներ էին փաստաթղթերի վերլուծությունը և խորհրդակցությունները կրթական և գնահատման համակարգերի առանցքային շահառուների հետ:

Վերլուծությունն իրականացնող ազգային թիմը բաղկացած էր մրցակցային գործընթացի միջոցով ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից ընտրված չորս փորձագետներից, ինչի շնորհիվ ապահովվել է նրանց անաչառությունը, և բացառվել շահերի որևէ բախում: Թիմը վերապատրաստում է անցել հետազոտությունների, ուսումնասիրությունների ընթացքում և գնահատման գործընթացներում ՅՈՒՆԻՍԵՖ-ի էթիկական և մեթոդաբանական չափորոշիչները պահպանելու նպատակով (2021 թ. հունիսի 10): Ուսումնասիրության գործողությունների պլանի մշակումից առաջ թիմի անդամները նաև ANLAS-ի մեթոդաբանության վերաբերյալ վերապատրաստում են անցել: Եռօրյա (2021 թ. հունիսի 16-18) դասընթացի ժամանակ ներկայացվել են ANLAS-ի մոդելը, գործընթացներն ու գործիքակազմը:

Հետազոտությունը ներառել է քարտեզագրման ժամանակ սահմանված մի շարք փաստաթղթերի ուսումնասիրություն և փաստաթղթերի հետազո



© UNICEF Armenia/2021, London

վերլուծություն՝ ANLAS-ի որակի չափանիշներին դրանց համապատասխանությունը պարզելու նպատակով: Փաստաթղթերի ուսումնասիրությունն իրականացվել է որակի սահմանված չափանիշի համեմատ յուրաքանչյուր առանցքային ոլորտը գնահատելու նպատակով: ANLAS-ի ուղղություններից յուրաքանչյուրի համար ստեղծվել է գնահատման ազգային ծրագրերին, ծրագրային փաստաթղթերին առնչվող իրավական և քաղաքականության շրջանակների ցանկ, այդ թվում՝ գնահատման կոնկրետ ծրագրերի ստեղծման և դրանց իրագործման իրավական փաթեթը:

Վերլուծության համար առաջնային տվյալները հավաքվել են քարտեզագրման ժամանակ սահմանված շահառուների հետ խորհրդակցությունների միջոցով յուրաքանչյուր առանցքային ոլորտի նախնական նկարագիրը քննարկելու նպատակով՝ որակի սահմանված չափանիշների հետ դրանք համեմատելու համար: Հետազոտության համար տվյալները հավաքվել են առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցների, առանցքային փորձագետների հետ հարցազրույցների և ֆոկուսխմբային քննարկումների միջոցով: Հարցազրույցներն անցկացվել են 29 շահառուների, այդ թվում՝ ՀՀ Կառավարության և Տեղական ինքնակառավարման մարմինների, արտաքին գնահատման գործակալությունների բարձրաստիճան ներկայացուցիչների, տվյալ ոլորտի փորձագետների, բուհերի ներկայացուցիչների և զարգացման գործընկերների հետ: Ֆոկուսխմբային քննարկումներ են անցկացվել 75 շահառուների, այդ թվում՝ 59 ուսուցիչների և բուհերի 16 դիմորդների (բուհ ընդունված ուսանողների) հետ՝ ապահովելով բազմազանություն ըստ մարզերի և բնակավայրերի:

Տրամադրվել են վերլուծական աղյուսակներ և դրանց լրացման հրահանգները՝ ANLAS-ի երեք

ուղղությունների վերլուծությունը փաստագրելու և ուղղորդելու համար: Յուրաքանչյուր ուղղությամբ վերլուծվել է մի քանի առանցքային ոլորտ՝ ուղղորդող հարցերի կիրառմամբ: Յուրաքանչյուր առանցքային ոլորտի համար սահմանվել է որակի չափանիշ, որի համեմատությամբ էլ նկարագրվել ու գնահատվել է տվյալ առանցքային ոլորտը: Այս որակի չափանիշները ներառված են ANLAS-ի եզրակացություններում: Ուսուցման գնահատման ազգային համակարգի վերլուծությունը բաղկացած էր հետևյալ երեք կարևոր քայլերից.

1. **Նկարագրել ANLAS-ի յուրաքանչյուր ուղղության առանցքային ոլորտները:**
2. **Գնահատել ANLAS-ի յուրաքանչյուր ուղղության առանցքային ոլորտները՝ վերհանելով բարելավման ենթակա ոլորտները և առաջարկություններ ներկայացնելով:**
3. **Եզրակացությունների ամփոփում:**

Առաջնային և երկրորդային տվյալներն օգտագործվել են յուրաքանչյուր առանցքային ոլորտի նախնական նկարագիրը քննարկելու նպատակով՝ որակի սահմանված չափանիշների հետ դրանք համեմատելու համար:

Մշակվել են բարելավմանն ուղղված առաջարկությունները: Այս առաջարկությունների նպատակն էր տրամադրել տեղեկություն բարելավման ռազմավարությունների մշակման և իրագործման համար որպես կրթության ոլորտի ավելի լայն պլանավորման գործընթացի մաս:

Փաստերի հավաքման բոլոր գործողությունների ընթացքում ապահովվել է հարգանքը հետազոտության մեջ ներգրավված բոլոր անձանց նկատմամբ՝ համաձայն ՅՈՒՆԻՍԵՖ-ի՝ Չետագոտություններում որակի ապահովման ընթացակարգի, Անձնական տվյալների պաշտպանության քաղաքականության, ՅՈՒՆԻՍԵՖ-ի՝ Չետագոտական, գնահատման, տվյալների հավաքման և վերլուծության գործընթացներում էթիկայի չափորոշիչների պահպանման ընթացակարգի և Չետագոտական, մշտադիտարկման և գնահատման գործընթացներին մասնակցող երեխաների վերաբերյալ տեխնիկական փաստաթղթի:

Որակի ապահովման ներքին ընթացակարգեր են կիրառվել՝ ապահովելով համապատասխանությունը հետազոտության էթիկական ասպեկտներին և վերոնշյալ ընթացակարգերում զետեղված սկզբունքներին:

Եզրակացություններ և առաջարկություններ

Գնահատման համակարգի համատեքստը (CN)

Գնահատման համակարգի համատեքստի գնահատումը (ուղղություն 1) ուղղորդվում էր ANLAS–ի յուրաքանչյուր առանցքային ոլորտին համապատասխանող գնահատման չորս առանցքային հարցերով: Դրանցից երեքը գնահատվել են որպես մասնակի իրականացված, մեկը՝ որպես իրականացված:

Ինչ վերաբերում է օրենսդրությանը, ապա շահառուների հետ խորհրդակցությունների և փաստաթղթերի վերլուծության ընթացքում պարզվել է, որ երկրում առկա են սովորողների պետական քննությունների կազմակերպման և իրականացման հստակ ուղեցույցներ՝ պետական չափորոշիչ պահանջներին համապատասխան: Այդուհանդերձ, բացակայում են կրթական համակարգը և, մասնավորապես, սովորողների գնահատումը կամ դասավանդման պրակտիկան ուղղորդող որակի չափորոշիչները: Ուստի առաջարկվում է ներկայում հանրային քննարկման դրված կրթության զարգացման 2030 թ. պետական ծրագրում ընդգծել ուսուցման զանգվածային գնահատման համակարգի

ուղղորդման կարևորությունը: Այդ ուղղորդումը պետք է անդրադառնա գնահատման համակարգի առաքելությանը, տեսլականին, գործառնություններին և նպատակներին և ընդգծի գնահատման համակարգի՝ ազգային գերակայություններին և չափորոշիչներին համապատասխանելու կարևորությունը:

Ուսուցման զանգվածային գնահատման ծրագրերի իրականացման նպատակով ստեղծվել է առանձին մարմին՝ Գնահատման և թեստավորման կենտրոնը (ԳԹԿ): ԳԹԿ-ն պատասխանատու է ուսուցման զանգվածային գնահատման ծրագրերի իրականացման որակի համար՝ ստանդարտացված գործիքակազմի մշակումից (գնահատման ազգային ծրագրերի դեպքում) և միջազգային հետազոտական գործիքների որդեգրումից (Մաթեմատիկայի և բնագիտության միջազգային միտումների հետազոտության՝ TIMSS-ի դեպքում) մինչև գործնական աշխատանք ու հաշվետվությունների ներկայացում: ԳԹԿ-ն պատասխանատու է նաև Հայաստանում բուհերի ընդունելության կենտրոնացված ընթացակարգերի (ներառյալ մրցույթները) կազմակերպման համար: Ընդհանուր առմամբ, չեն արձանագրվել խնդիրներ,

որոնք կարող էին զգալի չափով վտանգել գնահատման համակարգի գործառնությունները, սակայն արժե դիտարկել ներկայացվող առաջարկները:

Կառավարությունը կայուն ֆինանսավորում է հատկացնում և՛ ԳԹԿ-ի ծրագրի, և՛ նրա կանոնադրական պարտավորությունների համար: ԳԹԿ-ի դրամաշնորհային պայմանագրերի և ֆինանսական ու ծրագրային տարեկան հաշվետվությունների համաձայն՝ այն 100 տոկոսով ֆինանսավորվում է Կառավարության կողմից: Միայն կենտրոնացված քննություններն են համաֆինանսավորվում մասնակիցների կողմից: Այնուամենայնիվ, խորհրդակցությունների ժամանակ մի շարք խնդիրներ են բացահայտվել, ինչպիսիք են տեխնոլոգիական ոլորտի մասնագետներին հատկացվող աշխատավարձի չափը, 2019 թ. TIMSS-ի իրականացման համար հատկացված բյուջեի սղությունը և որոշակի ֆինանսական սահմանափակումները, որոնք կարող են ազդել գնահատման ծրագրերի որակի վրա: Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ հիմնական ֆինանսավորման կայունությունն ապահովում է Կառավարությունը, և ԳԹԿ-ին աշխատանքի ձախողում չի



© UNICEF Armenia/2021/Գալստյան

սպառնում ֆինանսավորման բացակայության պատճառով: Այնուամենայնիվ, ավելի բարձր որակավորում ունեցող մասնագետներին աշխատանքի ընդունելու և տվյալ ոլորտում նրանց պահելու, ծրագրերի որակյալ իրագործումն ապահովելու և միջազգային հետազոտություններին լիարժեք մասնակցելու համար հավելյալ ֆինանսավորում կամ բյուջեի հատկացումների վերանայում են անհրաժեշտ:

Կառավարության բարձրաստիճան ներկայացուցիչների հետ անցկացված հարցազրույցների ընթացքում ստացված տվյալների համաձայն՝ ղեկավարությունը գնահատման համակարգը խթանելու և դրան աջակցելու քաղաքական պատրաստակամություն է հայտնել: Հարցազրույցներին մասնակցած բոլոր փորձագետներն ու պաշտոնյաներն ընդհանուր առմամբ կարևորել են ուսուցման գնահատման զանգվածային

ծրագրերը: Չնայած դրան՝ նկատվել է վստահության շատ ցածր մակարդակ ուսուցման գնահատման ազգային, միջազգային ծրագրերի և դպրոցների ավարտական քննությունների նկատմամբ: Բացի դրանից՝ հաստատությունների ներկայացուցիչներն ու փորձագետները, որոնք գնահատման ազգային և միջազգային ծրագրերի արդյունքների առաջնային սպառողն են համարվում, կամ տեղյակ չեն այդ ծրագրերից, կամ բավարար կարողություններ չունեն որոշումների կայացման գործընթացում այդ արդյունքները կիրառելու համար: Ուստի մի կողմից ունենք այնպիսի իրավիճակ, երբ ղեկավարությունը խոսում է գնահատման ծրագրերի կարևորության մասին, մյուս կողմից՝ այդ ուղերձը մշտապես չի հաղորդվում հիմնական շահառուներին (օրինակ՝ ՏԻՄ-երին, հետազոտական համայնքին և այլն): Այս հետազոտության արդյունքում առաջարկվել է փոխել հաղորդակցման ռազմավարությունները, փոխադարձաբար բարձրաձայնել մտահոգություններն ու առաջարկները, մասնավորապես, պարբերաբար հանդիպումներ կազմակերպել՝ դրանց օրակարգում հստակ կերպով ներառելով ԳԹԿ-ի կողմից իրականացվող ուսուցման

զանգվածային գնահատման ծրագրերի որակի խնդիրների քննարկումը:

Գնահատման համակարգի որակը (QLE)

Ըստ Հայաստանի համար ընդունված ANLAS-ի ուղեցույցի՝ զանգվածային գնահատման որակը (ուղղություն 2) 6 առանցքային ոլորտ ունի, ու բոլորն էլ գնահատվել են որպես մասամբ իրականացված:

Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ զանգվածային գնահատման ծրագրերի և քննությունների որակը զգալիորեն տարբեր են՝ կախված ծրագրից: TIMSS-ի պարագայում Հայաստանը պետք է որոշակի բարեփոխումներ իրականացնի՝ բարելավելով վալիդությունը և համապատասխանությունը պետական չափորոշիչներին: Հարցազրույցների մասնակիցները նշել են, որ բնագիտամաթեմատիկական (STEM) ծրագրի զգալի մասի դասավանդումը սկսվում է ոչ թե 4-րդ, այլ 5-րդ դասարանից: Փորձագետների կարծիքով, 5-րդ դասարանցիների ծրագիրն ավելի շատ է համապատասխանում TIMSS-ի գնահատման շրջանակին, սակայն կիրառվող ընտրանքային մոտեցումը թույլ չի տալիս Հայաստանում հետազոտության մեջ ներգրավել 5-րդ դասարանցիներին:

Հաշվի առնելով ներկա խնդիրը՝ առաջարկվել է համընդհանուր հաշվետվություն մշակել (բացի TIMSS-ի փաստաթղթերում ծրագրի բովանդակության համապատասխանեցման աղյուսակից) երկրի կրթական ծրագրի՝ TIMSS-ի գնահատման շրջանակին համապատասխանելով վերաբերյալ և միայն դրանից հետո համապատասխան եզրակացություններ անել:

TIMSS-ի գնահատման ժամանակ կիրառվում է երկփուլ պատահական ընտրանքի մեթոդը. առաջին փուլում կազմվում է դպրոցների ընտրանքը, իսկ երկրորդ փուլում ընտրանքում ընդգրկված յուրաքանչյուր դպրոցից մեկ կամ երկու ամբողջական դասարան է ընտրվում: Ընտրանքի մոտեցման և մեթոդաբանության տեսանկյունից Հայաստանը բավարարում է TIMSS-ի բոլոր պահանջները:

Բարձրորակ, միջազգայնորեն համադրելի տվյալների համար պահանջվող մոտեցման համապատասխանությունն ու միօրինակությունն ապահովելու նպատակով Հայաստանում TIMSS հետազոտությունն իրականացվում է մի շարք ստանդարտացված գործառնությունների և ընթացակարգերի միջոցով: Այդ գործառնությունների և ընթացակարգերի հիմնական

քայլերը նույնական են գնահատման տարբեր շրջափուլերում: Այդպիսով, ընտրանքի մոտեցման և մեթոդաբանության տեսանկյունից Հայաստանը ևս բավարարում է TIMSS-ի բոլոր պահանջները: Հայաստանում տվյալների շտեմարանի ստեղծումից և Կրթական ձեռքբերումների գնահատման միջազգային ասոցիացիայի (IEA) Համբուրգի կենտրոն այն ուղարկելուց հետո սկսվում է ստուգման և խմբագրման՝ «տվյալների մաքրման» գործընթացը: Տվյալների մաքրումը հակասական տվյալների ստուգումն է և դրանց ֆորմատավորումը՝ ստանդարտացված վերջնական տեսքի բերելու համար: Արդյունքների վերաբերյալ TIMSS-ի հաշվետվությունները տարեցտարի բարելավվում են: 2019 թ. հաշվետվություններն օգտագործողին ավելի հարմար են, այնտեղ զետեղված տվյալներն ուղեկցվում են գրաֆիկներով և վիզուալ այլ նյութերով: Դա ավելի դյուրին է դարձնում տեղեկատվության ընկալումը ոչ միայն մասնագետների, այլև հանրության լայն շերտերի կողմից: Կայքում հրապարակվող ինտերակտիվ նյութերն ավելի հասկանալի են դարձնում TIMSS-ի եռթյունը: Հետազոտության արդյունքներից կարելի է եզրակացնել, որ



© UNICEF Armenia/2020/Գրիգորյան

Հայաստանում առանձնապես կարիք չկա բարելավելու TIMSS-ի իրականացման գործընթացը:

Ազգային մակարդակում Հայաստանը տեղում մշակում և իրականացնում է ուսուցման գնահատման զանգվածային ծրագրեր, որոնք ներառում են (i) հայոց լեզուն, գրականությունը և

պատմությունը (ՀԱԱՍ, մեկնարկել է 2010 թ.), (ii) ֆիզիկան և քիմիան (ԲԱԱՍ, մեկնարկել է 2011 թ.), (iii) օտար լեզուները (OLAS, մեկնարկել է 2013 թ.):

Ազգային մակարդակում մշակված ուսուցման գնահատման ծրագրերի թեստերի վալիդությունը երաշխավորվում է՝

հիմնվելով թեստերը մշակողների փորձագիտական կարծիքի վրա: Հարցազրույցների և փաստաթղթային վերլուծության արդյունքների համաձայն՝ բացակայում է գնահատման շրջանակի ամբողջական նկարագրությունը, որը կարևոր էլակետ է վալիդության գնահատման համար: Դա վտանգում է թեստերի վալիդությունը, քանի որ չկա որևէ չափանիշ, ըստ որի՝ ծրագիր մշակողները կարող են տվյալ թեստում ապահովել այն բոլոր հնարավոր հարցերի ներկայացվածությունը, որ պետք է ներառված լինեն դրանում: Ըստ մեր անցկացրած հարցազրույցների՝ թեստի բովանդակային վալիդության վերաբերյալ որոշումը հիմնված է հետևյալի վրա. (i) ծրագիրը մշակողների կարծիքը գնահատման կառուցվածքի վերաբերյալ, (ii) տվյալ բնագավառում միջազգային պրակտիկայի ուսումնասիրությունը (հիմնականում TIMSS և Ուսանողների միջազգային գնահատման ծրագիր՝ PISA), (iii) դպրոցական դասագրքերը, (iv) նախորդ տարիներին մշակված ծրագրերի բազան: Տվյալների հուսալիությանը վերաբերող միջոցառումները ներառված են ծրագրերի որակի վերաբերյալ ներքին հաշվետվություններում: Այդ միջոցառումները հիմնականում ուղղված են նույն թեստում տարբեր հարցերի ներքին

հետևողականության ստուգմանը: Այս ներքին հաշվետվություններից ստացվող տվյալները ակտիվորեն օգտագործվում են ծրագրի որակի վերաբերյալ որոշումներ կայացնելիս: Հետազոտության արդյունքում առաջարկվել է զուգահեռ կամ այլընտրանքային ձևերի հուսալիությունը ստուգելու գործելակերպեր որդեգրել, ինչպես նաև ստուգել-վերստուգել տվյալների հուսալիությունը, երբ գնահատման ծրագրերում ընդգրկված սովորողները գնահատվում են թեստի զուգահեռ տարբերակների միջոցով:

Հարցազրույցների արդյունքում նաև պարզ է դարձել, որ ընտրանքը համապատասխանեցվում է ուսումնասիրության համար ամկա ռեսուրսներին: Բացի դրանից՝ տուժել է նաև ընտրանքի ներկայացուցչականությունը. թիմը հակված է բացառելու փոքրաթիվ աշակերտներով դպրոցները: Ուստի, հաշվի առնելով տվյալ հանգամանքները, ընտրանքային մոտեցումը հստակ չէ և չի իրականացվել գիտական մոտեցմամբ: Առաջարկվել է (i) վերանայել և ամբողջացնել ընտրանքի մեթոդաբանությունը, (ii) ընտրանքի իրականացման հստակ նկարագրություն կազմել՝ ներառելով ընդհանուր մոտեցումը, թիրախային խմբերը, բացառման դեպքերը և մասնակցության տոկոսը, (iii)

համապատասխանաբար բյուջեի հարմարեցում նախաձեռնել:

Գործնական աշխատանքները կազմակերպում և իրականացնում է ԳԹԿ-ի ջննությունների կազմակերպման բաժինը: Այս բաժինը պատասխանատու է բոլոր ուսումնասիրությունների և ջննությունների ընդհանուր կազմակերպման համար: Այս աշխատանքների որակն ապահովելու նպատակով բաժինն աշխատանքի է ընդունում և վերապատրաստում ադմինիստրատորների: Ուսուցման գնահատման զանգվածային ազգային ծրագրերի պարագայում բաժինն օգտագործում է ԳԹԿ-ի ներքին կարողությունը: Նրանք գնահատման տվյալների հավաքման ուղեցույց են ստանում: Այդ ուղեցույցի նպատակը գնահատման տվյալների հավաքման ստանդարտացված պայմանների ապահովումն է: Ինչ վերաբերում է տվյալների անվտանգությանը, ապա առկա են տվյալների պահման համապատասխան ընթացակարգեր, որոնք ապահովում են թեստերի արդյունքների անվտանգությունն ու գաղտնիությունը: Այդուհանդերձ, հաշվի առնելով տեխնիկական անձնակազմի փոփոխականությունը, առաջարկում ենք հավելյալ ուշադրություն դարձնել տվյալների անվտանգության, կառավարման և

մշակման վերաբերյալ մանրամասն ձեռնարկների կազմմանը:

Ուսուցման գնահատման ազգային ծրագրերի յուրաքանչյուր ալիքից հետո հրապարակվում է արդյունքների վերաբերյալ ամբողջական հաշվետվությունը, ներառյալ տվյալների երկրորդային վերլուծությունը: Այդ վերլուծությունն ընդգրկում է (i) նկարագրական վիճակագրությունը, (ii) կորելյացիոն վերլուծությունը և (iii) ռեգրեսիոն մոդելները: Հաշվի առնելով այն փաստը, որ այս հետազոտությունը շարունակաբար է իրականացվում, պետք է ներկայացնել նաև տարիների ընթացքում գրանցված միտումները: Թերևս առկա է երկու խոչընդոտ: Նախ՝ չկա որևէ ճշգրիտ փաստ գործիքների վալիդության վերաբերյալ: Ավելին՝ գնահատման համակարգը դեռևս պետք է հիմնովին մշակվի և բնութագրվի: Երկրորդ՝ ԳԹԿ-ն պարտավոր է ամեն տարի իրականացնել վերը նշված գնահատման ազգային ծրագրերից մեկը, բայց ընտրության սկզբունքները հստակ չեն: Ուստի տարբեր խմբերի տվյալների բազաները համատեղելի չեն ժամանակացույցի, գործիքակազմի և գնահատված կոնստրուկտների տեսանկյունից:

Հետազոտության արդյունքների համաձայն՝ առաջարկվում է

օգտվել շարունակական բնույթի ուսումնասիրություններից և վերադառնալ միտումների վերլուծությանը դրա համար ամուր հիմքեր ստեղծելուց հետո:

Ուսուցման զանգվածային գնահատման ազգային ծրագրերի միակ փաստաթուղթը արդյունքների վերաբերյալ վերջնական հաշվետվությունն է ԳԹԿ-ի կայքում այս ծրագրերի մասին տեղեկացնող առանձին հրապարակման հետ մեկտեղ: Արդյունքները տարածվում են ԳԹԿ-ի պաշտոնական ուղիներով (հիմնականում կայքի միջոցով) և շահագրգիռ կողմերի հետ տարատեսակ հանդիպումների ժամանակ: Բացի դրանից՝ բոլոր մարզերի կրթության վարչություններին ուղարկվում է հաշվետվության պատճենը: Հարցազրույցների ընթացքում պարզվել է, որ օգտագործողները չեն կարող ներբեռնել գնահատման ծրագրի արդյունքների տվյալների բազան: Առաջարկվել է ընդլայնել տարածվող նյութերի շրջանակը՝ բոլորին հասանելի դարձնելով գնահատման արդյունքների տվյալների շտեմարանը: Դա կնպաստի ծրագրերի վերաբերյալ տեղեկության տարածմանը և հետազոտողներին հասանելի կդարձնի արդյունքները:

Զննությունների պարագայում բովանդակային վալիդությունը

սահմանվում է որպես այն հնարավոր հարցերի ամբողջության ներկայացվածություն, որոնք պետք է ընդգրկված լինեն թեստում: Թեստերի մշակումն իրականացվում է ԳԹԿ-ի՝ կոնկրետ առարկայի մասնագետի վերահսկողությամբ: Նա վերահսկում է թեստերի մշակման ընդհանուր գործընթացը՝ միևնույն ժամանակ աշխատելով արտաքին փորձագետների հետ: ԳԹԿ-ն համակարգում է և որոշ դեպքերում մասնակցում նաև թեստերի մշակմանը տնօրենի որոշմամբ: Զննական թեստերը կազմելիս հարցեր մշակողներն օգտվում են և՛ ուղեցույցներից, և՛ հարցերի շտեմարաններից: Շտեմարաններում ընդգրկված հարցերը նախորդ տարիների քննությունների ժամանակ ներառված հարցերն են: Դրանք ունեն ԳԹԿ-ի ներքին տեխնիկական փաստաթղթերում ընդգրկված որակի համապատասխան ցուցիչներ, ինչպիսիք են հուսալիությունը, բարդությունը և խտրականությունը: Զննական հարցերը մշակողները կարող են համապատասխան փոփոխություններ կատարել՝ հարցերը բովանդակային ոլորտներին ավելի համապատասխան դարձնելու նպատակով: Այսպիսով, հաշվի առնելով և՛ քննությունների, և՛ արտաքին գնահատման ծրագրերի ընդունված՝ գիտելիքները

ստուգելու նպատակը՝ կարելի է եզրակացնել, որ վալիդությունը և հուսալիությունը հիմնականում պահպանված են: Մենք նաև առաջարկում ենք դիտարկել հիմնական քննություններից առաջ պիլոտային փորձարկման հնարավորությունները՝ անհրաժեշտության դեպքում հաշվի առնելով գաղտնիության ապահովման միջոցառումները:

Քննական ծրագրերը հիմնված են մարդահամարի տվյալների վրա, այսինքն՝ նրանք անցկացվում են քննության չափանիշներին համապատասխանող բոլոր սովորողների համար: 9-րդ և 12-րդ դասարանների աշակերտները պարտավոր են հանձնել պետական ավարտական քննություններ: Ուսուցման արտաքին գնահատման ծրագրերի համար ԳԹԿ-ն կիրառում է ստրատիֆիկացված (շերտավորված) ընտրանքի մոտեցումը: Ընտրանքի առաջին շերտը հիմնվում է երկրի վարչական բաժանման, երկրորդը՝ բնակավայրի տեսակի (մայրաքաղաք, քաղաքային/ գյուղական բնակավայր) վրա: Ընտրանքի մոտեցմանն առնչվող խնդիրներն ընդհանուր են ազգային մակարդակով մշակված և իրականացված գնահատման բոլոր ծրագրերի համար: Ուստի, հաշվի առնելով տվյալ հանգամանքները, ընտրանքի մոտեցումը հստակ չէ

և չի իրականացվում գիտական մոտեցմամբ: Առաջարկվել է (i) վերանայել և ամբողջացնել ընտրանքի մեթոդաբանությունը, (ii) ընտրանքի հստակ նկարագրություն կազմել՝ ներառելով ընդհանուր մոտեցումը, թիրախային խմբերը, բացառման դեպքերը և մասնակցության տոկոսը, (iii) համապատասխանաբար բյուջեի հարմարեցում նախաձեռնել:

Ե՛վ քննությունների, և՛ արտաքին գնահատումների գործնական աշխատանքները վերահսկում և ուղղորդում է ԳԹԿ-ի քննությունների կազմակերպման բաժինը: Այնուամենայնիվ, որոշ դեպքերում քննությունների կազմակերպման համար պատասխանատու են պետական դպրոցները: Պատասխանատու հաստատությունների և գնահատման ծրագրերի տեսակների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը գետեղված է ստորև՝ աղյուսակում: Մեր հարցազրույցների ընթացքում ծագող հիմնական խնդիրը գործընթացի կազմակերպման հուսալիության հարցն է: Դպրոցներում հակված են օգնելու աշակերտներին քննության ժամանակ՝ փորձելով օգնել նրանց բարձր միավորներ հավաքելու: ԳԹԿ-ն նման գործողությունները վերահսկելու որևէ հուսալի մեխանիզմ չունի:

Զննությունների արդյունքները հայտնի են դառնում քննության ավարտից հետո 24 ժամվա ընթացքում: Այդ արդյունքները առանձին հայտնում են աշակերտներին ստուգումից հետո (սախորդ պարբերության մեջ նկարագրված ընթացակարգերի միջոցով): Ինչ վերաբերում է վերլուծական հաշվետվություններին, ապա ԳԹԿ-ն նկարագրական հաշվետվություններ է կազմում: Արտաքին գնահատման ծրագրերի յուրաքանչյուր ալիքից հետո հրապարակվում է արդյունքների վերաբերյալ ամբողջական հաշվետվությունը, ներառյալ տվյալների երկրորդային վերլուծությունը: Այդ վերլուծությունն ընդգրկում է (i) նկարագրական վիճակագրությունը, (ii) կորելյացիոն վերլուծությունը, (iii) ռեգրեսիոն մոդելները և (iv) համատեքստային տվյալների վերլուծությունը:

Տարեցտարի դիտարկվող միտումների վերլուծության առնչությամբ կարելի է ասել, որ արտաքին գնահատման ծրագրերի խնդիրները նույնն են, ինչ ազգային գնահատման ծրագրերի դեպքում: Առաջին հերթին չկա որևէ ճշգրիտ փաստ գործիքների՝ միմյանց համապատասխանելու վերաբերյալ: Դա նշանակում է, որ տարբեր տարիների ընթացքում անցկացված քննությունները համադրելի չեն: Ուսումնառության համատեքստը

ներկայացնող գնահատման շրջանակի մասը դեռևս անհրաժեշտ է հիմնովին մշակել և բնութագրել: Երկրորդ հերթին, ԳԹԿ-ն ամեն տարի պարտավոր է իրականացնել արտաքին գնահատման ծրագրերից մեկը, սակայն ընտրության սկզբունքները հստակ չեն: Հետևաբար տարբեր խմբերի տվյալների բազաները համատեղելի չեն ժամանակացույցի և գործիքակազմի տեսանկյունից:

Հաշվի առնելով հետազոտության արդյունքները՝ առաջարկվում է օգտվել շարունակական բնույթի ուսումնասիրություններից և վերադառնալ միտումների վերլուծությանը դրա համար ամուր հիմքեր ստեղծելուց հետո:

Զննությունների արդյունքները ներկայացվում են ԳԹԿ-ի կայքում վերը նկարագրված հաշվետվությունների ձևով: Արտաքին գնահատման ծրագրերի դեպքում միակ փաստաթուղթը արդյունքների վերաբերյալ վերջնական հաշվետվությունն է ԳԹԿ-ի կայքում հրապարակվող տեղեկատվության հետ մեկտեղ: Արդյունքները տարածվում են ԳԹԿ-ի պաշտոնական ուղիներով (հիմնականում կայքի միջոցով) և շահագրգիռ կողմերի հետ տարատեսակ հանդիպումների ժամանակ: Բացի դրանից՝ բոլոր մարզերի կրթության

վարչություններին ուղարկվում է հաշվետվության պատճենը: Սակայն բացակայում է արդյունքների տարածման՝ թիրախային խմբերին հարմարեցված ամբողջական ռազմավարությունը, չկան կոնկրետ ուղիներ և տարածման նյութեր, որոնք պատշաճ կերպով համապատասխանեցված են այդ խմբերի կարիքներին: Առաջարկվել է իրագործման պլանի հետ մեկտեղ նյութերի տարածման համընդհանուր ծրագիր մշակել: Ավելի հետևողական և նախապես պլանավորված մոտեցման պարագայում ԳԹԿ-ն հետադարձ կապ ստանալու և իր ծրագրերի կարևորությունը մեծացնելու հնարավորություն կունենա:

Գնահատման համակարգի համահնչունությունը (CH)

Համապատասխանեցումը կրթական չափորոշիչներին և ծրագրին, սովորողների ուսումնառության առաջընթացը դպրոցական կրթության կարևորագույն փոկերում և ուսումնառության համատեքստերի վերաբերյալ փաստերը զանգվածային գնահատման ծրագրերի համապատասխանության 3 առանցքային ոլորտներն են:

Բարեփոխման հիմնական ոլորտը գնահատման ծրագրի համապատասխանությունն է կրթական չափորոշիչներին և

ծրագրին: Դրա իրագործման համար գնահատման յուրաքանչյուր ծրագրի համար հստակորեն սահմանված և ընդունված գնահատման շրջանակներ են անհրաժեշտ: Գնահատման միջազգային ծրագրի (TIMSS) դեպքում պետք է մանրագնին կերպով ուսումնասիրվի համատեղելիությունը պետական չափորոշչի հետ: Իրականում քննական հարցերը կազմողների և գնահատման ծրագրեր իրականացնողների շրջանում ընդհանուր ընկալում կա յուրաքանչյուր ծրագրի գնահատման շրջանակի վերաբերյալ: Այնուամենայնիվ, փորձագիտական մակարդակում ընդհանուր ընկալումը բավարար չէ, ավելի շատ փաստեր և հիմնավորումներ են անհրաժեշտ: Առաջնային նշանակություն ունի գնահատման շրջանակների՝ փորձագիտական մակարդակից անցումն փաստահենք ու հիմնավորված ընկալմանը: Դրա պատճառը հանրակրթության պետական չափորոշչի վերջին փոփոխություններն են: Ներկա չափորոշչի համեմատ նոր չափորոշչի դեպքում ավելի համակարգված մոտեցում է կիրառվում ուսումնառության վերջնարդյունքների նկատմամբ՝ 8 կարողունակությունների տեսքով:

Փաստաթղթերի վերլուծության և շահառուների հետ խորհրդակցությունների ընթացքում

հավաքված տվյալներից կարելի է եզրակացնել, որ միայն TIMSS-ն է առաջարկում այն հուսալի և տեխնիկապես ամբողջական տվյալները, որոնց օգնությամբ կարելի է եզրահահանգումներ անել սովորողների առաջընթացի վերաբերյալ: Դա հիմնականում պայմանավորված է հստակորեն սահմանված, ներկայացված և գործուն գնահատման շրջանակների և ընթացակարգերի բացակայությամբ, ինչպես քննարկվել է վերը: TIMSS-ը Հայաստանում անցկացվում է 2003 թվականից: Առկա են 5 ամիքների տվյալները, որոնք հիմնված են տարրական և միջնակարգ դպրոցի ավարտին անցկացված հետազոտությունների վրա: Հաշվի առնելով հետազոտության արդյունքները՝ առաջարկվել է շարունակել Հայաստանում TIMSS-ի իրագործումը և ուսումնասիրությունների անցկացումը՝ դրանցում ներառելով նաև 8-րդ դասարանի աշակերտներին:

Ուսուցման զանգվածային գնահատման ազգային ծրագրերում ուսումնառության համատեքստի վերաբերյալ փաստերն ավանդաբար մնում են դպրոցի տեղակայման, սովորողների սեռի և ըստ առարկաների ձեռքբերումների շրջանակում: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ

վերջին հետազոտություններում ընդգրկվում են նաև սովորողների վերաբերմունքը, ակնկալիքները և ծնողների աջակցությունը: Թեև գնահատման ազգային ծրագրերն աստիճանաբար ուսումնառության ավելի լայն համատեքստ ներառող հետազոտությունների են անցնում, գնահատման հստակ շրջանակի բացակայության պատճառով այդ տվյալները հուսալի չեն: Բացի դրանից՝ հետազոտություններում ներգրավված չեն մյուս շահառուները (օրինակ՝ ծնողները, ուսուցիչները և դպրոցների տնօրենները):

Վերջին 20 տարիներին Հայաստանն ուսուցման զանգվածային գնահատման համակարգ է մշակել: Հաջողվել է կայուն կազմակերպչական կառույցներ և հաստատություններ կառուցել, որոնք ունակ են 5000 և ավելի մասնակից ներգրավող հետազոտություններ անցկացնել: Գնահատման համակարգը միջազգային և տեղական գործընկերների հետ աշխատելու փորձ ունի: Առկա է տվյալների բազայի մշակման և կառավարման համակարգ: Սա ամուրի հիմքեր է ապահովում ծրագրերի համաձայնեցված իրագործման համար:

Այնուամենայնիվ, համակարգը պետք է խթանել՝ ընդգծելով գնահատման ծրագրերի, մասնավորապես՝ ազգային մակարդակում

մշակվող և իրականացվող ծրագրերի որակը, որը պետք է բարելավել՝ հանգամանորեն կիրառելով գիտական լավագույն գործելակերպերը վավերականության և հուսալիության գնահատման հարցում, գործնական աշխատանքի որակի և հաշվետվությունների և նյութերի տարածման մշակույթում: Բոլոր այս բաղադրիչներն անհրաժեշտ են, որպեսզի

ապահովվի ծրագրերի նկատմամբ վստահելիության բարձր մակարդակ դրանց ապացուցված և հստակորեն արտահայտված որակի շնորհիվ: Դա կօգնի մեծացնելու հետաքրքրությունը ծրագրերի արդյունքների նկատմամբ և դրանք կրթության քաղաքականության մաս կդարձնի: Ուսումնասիրության ամբողջական արդյունքները և խորհրդատվությունները ներկայացված են 6-րդ հավելվածում:

A series of 25 horizontal red lines, evenly spaced, filling the majority of the page, providing a template for writing.



Facebook.com/UNICEFArmenia



Twitter.com/UNICEFArmenia



Instagram.com/UNICEF_Armenia



YouTube.com/UNICEFArmenian

yerevan@unicef.org

www.unicef.am

unicef 

յուրաքանչյուր երեխայի համար

